ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՆՇՎԵՑ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՄԱՆ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 7-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Է ԲԵՐՎԵԼ ՍԿԵՎՌԱՅԻ ՄԱՍՆԱՏՈՒՓԸ

Կիրակի, նոյեմբերի 5-ին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական օծման և գահակալության 7-րդ տարեդարձը: Այս առիթով հայոց բոլոր եկեղեցիներում հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ս. Պատարագ մատուցվեց հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Հայրապետի: Պատարագիչն էր Ավստրալիայի ու Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Աղան արքեպիսկոպոս Պալիոզյանը:

Ս. Պատարագի ավարտին Իշման Ս. Սեղանի առջև կատարվեց Հայրապետական մաղթանք: Մինչ արարողությունը խոսված իր քարոզում Աղան Սրբազանն ընդգծեց այն սրբազան դերն ու նշանակությունը, որ ունեցել է և ունի հայ ժողովրդի կյանքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, և կոչ արեց մշտահունչ աղոթքի, որ Աստված անսասան պահի Ս. Էջմիածինը և երկար ու արդյունավետ կյանք շնորհի Հայոց Հայրապետին:

Շնորհավորելով ազգընտիր Հայրապետին յոթամյա գահակալության առիթով՝ Աղան Սրբազանը նշեց. «Այս յոթ տարիները եկան մեզ ասելու և հաստատելու, որ Վեհափառ Հայրապետի հոգատար աջը հովանի է թե՛ Հայաստանի և թե՛ ողջ Սփյուռքի հայության վրա: Եթե նայելու լինենք անցած յոթ տարիներին, ապա կտեսնենք, թե ինչպիսի մեծ գործունեություն է ծավալել մեր Վեհափառ Հայրապետը: Այն տաճարները, այն եկեղեցիները, որ կառուցվել են, կառուցվել են, որպեսզի Լուսավորչի հավատքը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հավատքը հասնի յուրաքանչյուր հայորդու՝ լինի Հայաստանի, թե Սփյուռքի մեջ»: Վերջում Սրբազան Հայրը ողջ հոգևոր դասի ու հավատացյալ հոտի կողմից մաղթեց, որ Վեհափառ Հայրապետի գավազանը մշտապես ծաղկյալ մնա, իսկ գործունեության դաշտը՝ լայն ու ընդարձակ, որպեսզի Նորին Սրբությունը հասնի մեր ժողովրդի ծով կարիքներին:

Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության առթիվ Հայ Եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին է բերվել քրիստոնյա աշխարհի նշանավոր սրբություններից մեկը՝ Սկևռայի մասնատուփը: 1283 թ. Սսի Կոստանդին արքեպիսկոպոսի հրամանով ստեղծված և 18 սրբերի (Ս. Պողոս, Պետրոս, Թադեոս, Բարդուղիմեոս առաքյալների, Ս. Գրիգոր Լուսավորչի, Հակոբ Մծբնա Հայրապետի, Հովհան Ոսկեբերանի, Ս. Կատարինեի և այլոց) մասունքներ պարունակող Սկևռայի նշանավոր մասնատուփը 500 տարի համարվում էր կորած:

1884 թ. Փարիզում այն գնվում է Բազիլևսկու բարձրաժեք իրերի հավաքածուից Էրմիտաժի կայսերական հավաքածուի համար: 2000 թ. Սանկտ Պետերբուրգի Ս. Կատարինե եկեղեցու օծման առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Ռուսաստանի հայոց թեմ կատարած այցի ժամանակ մասունքները Էրմիտաժի կողմից նվիրաբերվում են Հայոց Եկեղեցուն և պահվում նորաօծ Ս. Կատարինե եկեղեցում: Վեհափառ Հայրապետի գահակալության 7-րդ տարեդարձի առիթով Ս. Էջմիածին բերված մասնատուփը մեկ շաբաթ Մայր Տաճարում գտնվելուց հետո կտեղափոխվի Մայր Աթոռի «Ալեք և Մարի Մանուկյան» Գանձատուն:

Հայրապետական մաղթանքն ավարտվեց Նորին Սրբության օրհնության խոսքով: Վեհափառ Հայրապետն իր ուրախությունը հայտնեց Սկևռայի սրբազան մասունքների՝ Մայր Աթոռ բերվելու կապակցությամբ և կոչ արեց, որպեսզի «.... ազգս հայոց ուխտի գա, խոնարհում և երկրպագություն բերի այս նվիրական մասունքներին, որպեսզի մեր սրբերի հրաշափառ զորությունը հեղվի նրանց կյանքերից ներս, հեղվի իրենց օջախներում և Հայոց աշխարհում ամենուր: Եվ այդ օրհնության ներքո ապրենք մենք՝ մեր նվիրյալ ծառայությունը բերելով մեր Եկեղեցուն, մեր Հայրենիքին և մեր ժողովրդին»:

Արարողությանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, թեմական առաջնորդներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, ազգային բարերարներ և բազմաթիվ հավատացյալներ, որոնք եկել էին իրենց նվիրումն ու սերը հայտնելու Մայր Աթոռին ու նրա արժանընտիր Գահակալին:

Հաջորդ կիրակի, նոյեմբերի 12-ին, Միածնաէջ Մայր Տաճարում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան, վանքերի տեսուչ Տ. Արարատ ծ. վարդապետ Գալթազճյանը: Պատարագին ներկա էին Մայր Աթոռի միաբանները, եպիսկոպոսաց դասը, թեմական առաջնորդներ ու բազում ուխտավորներ, ովքեր եկել էին Մայր Աթոռ՝ համբուրելու արդեն մեկ շաբաթ Իջման Սուրբ Սեղանի առջև գտնվող Սկևռայի մասնատուփը և ծնրադրելով տասնութ սրբերի մասունքներ պարունակող մասնատուփի առջև՝ հայցելու Բարձրյալի օրհնությունն ու սրբերի բարեխոսությունը:

Մեկ շաբաթ անընդմեջ Հայաստանի տարբեր թեմերից չէր դադարում ուխտավորների հոսքը դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Բարեպաշտ ժողովուրդը գալիս էր՝ Իջման Սուրբ Սեղանի առջև խոնարհվելու սրբություններին և ստանալու նրանց զորավոր օրհնությունը:

Պատարագի սրբազան արարողության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը իր պատգամն ու օրհնությունը փոխանցեց խուռներամ հավատացյալներին: «Առիթ ունենք մեկ անգամ ևս մերձենալու այս մասունքներին: Մերձենալու հավատով, որ այս մասունքներից զորություն պիտի բաշխվի մեզ, հիվանդները պիտի բժշկվեն, խուլերը պիտի լսեն, համրերը պիտի խոսեն և Աստծո ողորմությունը պիտի հեղվի մեր հարկերից ներս»,- նշեց Նորին Սրբությունը: Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի ա-

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՍԿԵՎՌԱՅԻ ՄԱՄՆԱՏՈՒՓԸ ԻՋՄԱՆ ՍՈՒՐԲ ՍԵՂԱՆԻ ԱՌՋԵՎ

ԱԿԱՅՍՏԻՑ ՏԵՍՈՒՄ ԷՐ ՕՐԵՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԵՐՈՒՄ ԳԱՐԵԳԻՆ Ի ԱՄԵՆԱՅՆ ՏԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ՀԱԿԱՍՏԻՊՈՍ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ
ՀԵՏՈ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀՈՍԿԻՄԱԹՈՎ ՀԱՅՐԱՊԵՏ ԳԵՂԱՐՔԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ՄՈՏ

ռաջնորդին և Էրմիտաժի տնօրինությանը՝ Հայոց Եկեղեցու հրաշագործ սրբությունը Մայր Աթոռին վերադարձնելու համար:

Այնուհետև Գարեգին Բ Կաթողիկոսի առաջնորդությամբ եկեղեցականների հանդիսավոր թափորը շարականների երգեցողության ներքո, ժողովրդի ուղեկցությամբ Սկևռայի սրբազան մասունքները պտտեցրեց Մայր տաճարի շուրջ՝ աղոթելով, որ երանելի սրբերն իրենց զորությունն ու օրհնությունը բաշխեն Հայոց աշխարհին ու ողջ հայ ժողովրդին:

Արարողության ավարտին Սկևռայի մասնատուփը տեղափոխվեց «Ալեք և Մարի Մանուկյան» Գանձատուն, որտեղ և կպահպանվի՝ մշտաբուխ իր սուրբ օրհնությունը բերելով հավատացյալ հայ ժողովրդին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ